ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐՈՒԱՆ
ԵՒ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ 75-ԱՄԵԱԿԻՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆԻՒԹԵՐ

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳՐԱՎՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին գոյության ողջ ընթացքում եղել է լուսավորության գլխավոր ակութը, հայ ազգային դիմագծի պահպանման միակ կառույցը։ Հայոց Եկեղեցին աշխարհի բոլոր եկեղեցիներից ամենաազգայինն է. պատմության տարբեր հանգրվաններում այն հայ ժողովրդի առաջնորդն է եղել, իսկ Հայոց կաթողիկոսը՝ ողջ ազգի ներկայացուցիչն ու շահերի պաշտպանը[1]։ Հայոց Եկեղեցու այս դերի մասին լավ գիտեին ոչ միայն առաջադեմ մտածողները, այլ նաեւ Ռուսական կայսրության ղեկավարությունը, որ ձգտում էր «թաղել» Հայոց Եկեղեցու ինքնուրույնությունը վարչական կոշտ միջոցներով։ Բայց եթե տասնամյակներ շարունակ դա արվում էր աստիճանաբար, ապա Ի. դարասկզբին այդ քաղաքականությունն ստացավ ակնհայտ զավթողական բնույթ։

Ռուսական կառավարության՝ Հայոց Եկեղեցու իրավունքների եւ գործունեության սահմանափակմանն ուղղված քաղաքականությունը հանգամանորեն ուսումնասիրել է Վ. Թունյանն իր «Խրիմյան Հայրիկի հայրապետությունը» երկհատորյա աշխատության մեջ[2]։ Հեղինակի համար ուսումնասիրության աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Հայաստանի ազգային արխիվի, Ռուսաստանի պետական պատմական արխիվի պահոցների փաստաթղթերը, պարբերական մամուլը, վավերագրերի ժողովածուները։

Հեղինակն իր աշխատության մեջ մանրակրկիտ ներկայացրել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գույքի բոնագրավման գործընթացը, որի հակաազգային բնույթը ցայտուն դրսեւորվել է օրենքի ընդունմանը նախորդող իրադարձություններում եւ կառավարող շրջանակում հարցի

---

[1] *Տես* В. Станкевич, Судьбы народов России, Берлин, 1921, *էջ 226։*

[2] *Տես* В. Тунян, Последний период патриаршества Хримяна 1893—1907 гг., Св. Эчмиадзин, 2012։

առնչությամբ պարբերաբար հրավիրվող քննարկումներում։ Այդ գործընթացի վերջնական արդյունքը եղավ 1903 թ. հունիսի 12-ի «Հայ Առաքելական Եկեղեցու գույքի բռնգրավման մասին» օրենքի հրապարակումը, որը բացառապես նպատակ ուներ զրկել մեր Եկեղեցին ինքնավարությունից եւ նյութական անկախությունից։

Բանն այն է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Ռուսական կայսրությունում կրոնական միակ կազմակերպությունն էր, որն ուներ ընտրված եւ կառավարությունից փաստացի անկախ ղեկավար՝ ի դեմս Հայոց կաթողիկոսի։ Այն նաեւ միակ Եկեղեցին էր, որը նյութական առումով անկախ էր կայսրությունից։ Հայոց կաթողիկոսի անկախ գործունեությունը լուրջ մտահոգության տեղիք տվեց։ Կայսերական գործիչները՝ ի դեմս Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի, ներքին գործերի նախարար Վ. Պլեւեի, սկսեցին միջոցներ փնտրել կաթողիկոսի իշխանությունը, Հայոց Եկեղեցու ինքնավարությունը սահմանափակելու համար։ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին Հայ Եկեղեցու նկատմամբ կայսերական իշխանություններն սկսեցին վարել բացահայտ գաղութատիրական քաղաքականություն։

Հայ Եկեղեցու գույքի բռնագրավման հարցում արմատական դիրքորոշում ուներ Գ. Գոլիցինը, որին մտահոգում էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցու (1893—1907 թթ.) օրեցօր աճող հեղինակությունը, ինչը, կառավարչապետի կարծիքով, կաթողիկոսի «ինքնագլուխ» գործունեության արդյունքն էր։ Հայերի իբր «հեղափոխական նկրտումներին» վերջ տալու համար Գ. Գոլիցինն առաջարկում էր մեծացնել կաթողիկոսի նկատմամբ ճնշումները։

Եկեղեցական գույքի բռնագրավման հարցում առանցքային դերակատարում ստանձնեցին Վ. Պլեւեն եւ Ս. Վիտտեն, որոնց տեսակետները կտրուկ տարբերվում էին։ Վ. Թունյանն իր աշխատության մեջ ներկայացնում է այս խոշոր պետական գործիչների դիրքորոշումը եւ հիմնավորում, որ նրանք երկուսն էլ ձգտում էին ուժեղացնել իրենց իշխանությունը կառավարությունում[3]։

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ողջ ունեցվածքը բռնագրավելու մասին զեկուցագիրը Գ. Գոլիցինի գրասենյակը պատրաստել էր դեռեւս 1899 թ. մարտին։ 1900 թ. փետրվարին պետական խորհրդի

---

[3] *Տե՛ս* В. Тунян, *նշ. աշխ., էջ 504։*

անդամ է. Ֆրիշի գլխավորությամբ ստեղծվում է հատուկ միջգերատեսչական հանձնախումբ (կոմիտե)։ Մայիսի 8-ին կայանում է այդ հանձնախմբի նիստը, որտեղ առանձնանում է երկու տեսակետ՝ կողմ եւ դեմ։ Առաջինը ներկայացնում էին Գ. Գոլիցինը եւ ներքին գործերի նախարար Դ. Սիպյագինը (1900–1902 թթ.), իսկ երկրորդը՝ արտաքին գործերի նախարար Մ. Մուրավյովը եւ ֆինանսների նախարար Ս. Վիտտեն (1892–1903 թթ.)։ Վերջինս բացահայտ դեմ արտահայտվեց Հայ Եկեղեցու ունեցվածքի բռնագրավմանը եւ ներկաների ուշադրությունը հրավիրեց առկա խնդիրների վրա։ Նախ՝ հաշվի էր առնվում ազգային կյանքում Հայ Եկեղեցու նշանակությունը, իսկ բռնագրավումը, նրա կարծիքով, ոտքի կհաներ ողջ հայությանը ոչ միայն Ռուսաստանում, այլ նաեւ ողջ աշխարհում։ Ապա՝ հաշվի էր առնվում հայերի դավանանքը. «Հայերը, ինչպես եւ մենք, քրիստոնյաներ են, եւ նրանց Եկեղեցին ավելի մոտ է մեր Ուղղափառ Եկեղեցուն»[4]։ Վերջին փաստարկը ստիպված էր հաշվի առնել Սրբազան Սինոդի օբեր-դատախազ Կ. Պոբեդոնոսցեւը, որը հրաժարվեց Գ. Գոլիցինին աջակցելուց։ Հանձնախմբի կազմը, բացառությամբ Գ. Գոլիցինի, հանդես եկավ բռնագրավման դեմ[5]։

Հանձնախումբը Գ. Գոլիցինի նախագիծը ծայրահեղ անցանկալի համարեց, քանի որ այն Ռուսաստանի դեմ կտրամադրեր ողջ հայությանը ոչ միայն կայսրության տարածքում, այլ նաեւ նրա սահմանից դուրս։ Հարկ է նկատել, որ սկզբունքորեն ռուսական իշխանությունները դեմ չէին Հայոց Եկեղեցու գույքի բռնագրավմանը, սակայն այն ժամանակավրեպ նկատեցին։ Անհրաժեշտ համարվեց իրական վերահսկողություն սահմանել Հայոց Եկեղեցու ինչպես եկամուտների եւ ծախսերի, այնպես եւ գործունեության վրա։ 1901 թ. հուլիսի 26-ին Նիկոլայ Բ.-ն հաստատեց հատուկ հանձնախմբի եզրակացությունը, որի համաձայն՝ վերահսկողություն պետք է սահմանվեր Ս. Էջմիածնի նյութական մուտքերի ու ելքերի վրա։

Զգալով Եկեղեցուն եւ լուսավորչությանը սպառնացող վտանգը՝ 1902 թ. մարտ–ապրիլ ամիսներին Մկրտիչ Ա. Վանեցին հրապարակեց նոր մշակված կանոնադրության նախագիծը, որը փորձում էր կարգավորել ծխական համայնքներում բարեփոխումների անցկացումը։ Համաձայն նոր նախագծի՝ եկեղեցու հոգեւոր սպասավորներին պետք է ընտրեին ծխական համայնքները, ծխական ժողովին էր հանձնվում իր

---

[4] *Տե՛ս* В. Тунян, *նշ. աշխ., էջ 506։*

[5] *Տե՛ս* С. Витте, Царствование Николая II, т. I, 2-е изд., Ленинград, 1924, *էջ 271։*

ենթակայության տակ գտնվող գույքի եւ տնտեսության կառավարումը։ Այս քայլով Խրիմյան Հայրիկը փորձեց յուրաքանչյուր հայի զգացնել Եկեղեցու սեփականատեր լինելը, որպեսզի վտանգի դեպքում կարողանար ընդհանուր հենարան ունենալ[6]։ Սակայն նախագծի հրատարակումը արագացրեց իրադարձությունների ընթացքը։ Կովկասի կառավարչապետը հայտարարեց, որ նախագիծը շրջանցում է բարձրագույն կանոնադրությունը, իսկ կաթողիկոսը փորձում է հակադրվել Եկեղեցու նկատմամբ վարվող պետական վերահսկողական քաղաքականությանը։

1903 թ. մարտին ներքին գործերի նախարար Վ. Պլեւեն նոր զեկուցագիր է ներկայացնում, որտեղ նշվում էր, որ Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարության հաջողված քաղաքականությունը տապալել է հայ հասարակության ռուսականացման ծրագիրը եւ նպաստել ազգային գիտակցության ամրապնդմանը։ Նշվում էր, որ Եկեղեցու եկամտի մի մասն ուղղվում է Թուրքիայում եւ Ռուսաստանում գործող հայկական հեղափոխական կազմակերպությունների նյութական ապահովմանը։ Ներքին գործերի նախարարը գրությանը կցել էր նաեւ առդիր, որում ներկայացվում էր 1896 թ. հունվարի 16-ին ռուսական կառավարության ընդունած՝ Հայ Առաքելական Եկեղեցին աստիճանաբար թուլացնելու ծրագրի կարճ պատմությունը[7]։

Հայոց Եկեղեցու ունեցվածքի բռնագրավման հարցը վերջնականապես քննարկվեց նախարարների հանձնախմբում։ Բռնագրավման օգտին հանդես եկավ հինգ նախարար, դեմ արտահայտվեցին տասներկուսը։ Վերջիններս բռնագրավումն իրավացիորեն համարում էին հակապետական գործողություն, որը «կհեղափոխեր» հայ հասարակությանը։ Բռնագրավման մոլեռանդ կողմնակիցներ Գ. Գոլիցինը եւ Վ. Պլեւեն իրենց դիրքորոշումը ներկայացնում էին որպես «ստիպված միջոց», Հայոց Եկեղեցու գործունեության նկատմամբ «արդյունավետ վերահսկողության» ծրագրի ձախողման արդյունք։ Նախատեսվում էր եկեղեցական անշարժ գույքը հանձնել երկրագործության եւ պետական կալվածքների, իսկ դրամագլուխը՝ ներքին գործերի նախարարություններին։ Ունեցվածքի եւ դրամագլխի ընդհանուր ղեկավարումը հանձնվում էր օտար դավանությունների բաժնին։

1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ Բ.-ն հաստատեց հինգ նախարարների կարծիքը։ Միապետի կամքը միանգամից վերջ տվեց բոլոր

---

[6] *Տե՛ս «Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ծխական կանոնագրութիւն», «Արարատ», Գ.–Դ., 1902, էջ 215։*

[7] *Տե՛ս* В. Тунян, *նշ. աշխ., էջ 501–502։*

քննարկումներին ու բանավեճերին։ Կայսերական օրենքով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, վանքերին, հոգեւոր հաստատություններին եւ դպրոցներին պատկանող բոլոր անշարժ գույքն ու կալվածքները անցնելու էին երկրագործության եւ պետական կալվածքների նախարարությանը, իսկ հիշյալ հաստատությունների դրամագլուխները՝ ներքին գործերի նախարարությանը՝ թողնելով այդ կալվածքների եւ դրամագլուխների սեփականության իրավունքը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն[8]։

Հայոց Եկեղեցին հունիսի 12-ի օրենքով, փաստորեն, զրկվեց ինքնուրույն գոյատեւման տնտեսական հիմքից։ Այս օրենքը նախ եւ առաջ պատժամիջոց էր հայ ժողովրդի նկատմամբ, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը Եկեղեցին էր։ Հայոց Եկեղեցին կորցնելու էր իր հատուկ կարգավիճակը՝ վերածվելով Ռուսական կայսրությունում հայերի տեղական հոգեւոր կենտրոնի, իսկ կաթողիկոսը զրկվելու էր ազգային ու քաղաքական ներկայացուցչությունից։ 1903 թ. հունիսի 12-ի օրենքն ամբողջացնում էր ռուսական կառավարության գաղութատիրական նկրտումները։

1903 թ. օգոստոսի 9-ին կայացավ Ս. Էջմիածնի Սինոդի եւ Ռուսաստանի հայոց թեմերի առաջնորդների համագումարը։ Երկար քննարկումից հետո միաձայն որոշում ընդունվեց խնդրել կաթողիկոսին դիմել ցարին եկեղեցական գույքի բռնագրավումը չեղարկելու համար, իսկ մերժման դեպքում հրաժարվել հանձնել Եկեղեցու ունեցվածքը, որը ոչ միայն ռուսահայերի, այլ նաեւ պարսկահայերի, Թուրքիայում եւ այլ երկրներում բնակվող հայերի սեփականությունն էր[9]։

Օրենքի հրապարակումից հետո հայ հասարակության մեջ սկսվեց ընդվզումների ու հուզումների երկարատեւ ընթացք։ Մայր Աթոռն ու հայ ազգային ուժերը, հասկանալով Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակաազգային ծրագրի լուրջ հետեւանքները, կազմակերպեցին հայ ժողովրդի դիմադրությունը։ Երեւանում, Ալեքսանդրապոլում, Աշտարակում, Ախալցխայում եւ այլ բնակավայրերում տեղի ունեցան բողոքի զանգվածային ցույցեր, ամենուր տարածվում էին թռուցիկներ, որոնք կոչ էին անում չենթարկվել կառավարության կամքին։ Հայ ժողովրդի համար այդ օրհասական պահին Հայոց կաթողիկոսի շուրջը համախմբվեցին

---

[8] *Տե՛ս* В. Тунян, *նշ. աշխ., էջ 507. ՀԱԱ, ֆ. 94, ց. 9, գ. 58, թ. 15.* Մ. Դանիելյան, *Հայոց եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունման պատճառները, «Էջմիածին» ամսագիր, Ը., 2007, էջ 94։*

[9] *Տե՛ս* В. Тунян, *նշ. աշխ., էջ 515։*

ողջ հայ ժողովուրդը, Ս. Էջմիածնի Սինոդը, ազգային կուսակցությունները: Հայության պայքարը համաժողովրդական բնույթ ընդունեց:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանը, զգալով հազարավոր հայերի աջակցությունը, օգոստոսի 4-ին իր թիվ 958 կոնդակով Ս. Էջմիածնի Սինոդին հրամայում է չկատարել օրենքը[10]*:*

Կաթողիկոսի գործունեությունը նյարդայնացնում է Վ. Պլեւեին: Վերջինս օգոստոսի 4-ի կոնդակը բնութագրում է որպես հրաժարում կայսեր կամքը իրագործելուց եւ Հայոց կաթողիկոսից պահանջում է անհապաղ ենթարկվել միապետի հրամանին[11]*:*

Մկրտիչ Ա. Խրիմյանը նահանջելու տեղ այլեւս չուներ: 1903 թ. օգոստոսի 21-ին նա հատուկ կոնդակով կարգադրում է Սինոդին առանց հրահանգի ոչինչ չհանձնել ռուս պաշտոնյաներին, իսկ բռնության դեպքում տեղեկացնել իրեն[12]*: Այս քայլով, փաստորեն, Հայոց կաթողիկոսը բացահայտ հակադրվեց Ռուսական կայսրության գաղութատիրական քաղաքականությանը:*

Հայ հասարակության շրջանում ծագած հուզումները հանդարտեցնելու համար կայսերական կառավարությունն սկսեց ստահոդ տեղեկություններ տարածել, թե իբր իրենք «մտահոգված են» Հայ Եկեղեցու գույքի պահպանմամբ, այդ պատճառով այն վերցնում են պետական «հոգածության» ներքո: Գույքի ընդունման հանձնաժողովի նախագահ է նշանակվում փոխնահանգապետ Նակաշիձեն: Վերջինս կրքերը հանդարտեցնելու համար հայտարարում է, որ եկեղեցական կալվածքների սեփականության իրավունքը մնում է Եկեղեցուն, փոխվում է միայն գույքի կառավարման ձեւը, եւ իրենք չեն դիպչում ո՛չ կրոնին, ո՛չ էլ եկեղեցական սրբություններին: Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ ո՛չ ժողովրդական լայն զանգվածները, ո՛չ կաթողիկոսի խնդրանք-բողոքները չկանգնեցրին հայատյաց կառավարչապետին, որի հրամանով

---

[10] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 133, թ. 24. նաեւ՝* Խ. ՂԱԶԱՐՅԱՆ, *Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական Եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին եւ 20-րդ դարի առաջին կեսին, «Էջմիածին», 1999, էջ 104:*

[11] *Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», «Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը» (1903–1907 թթ.), կազմ.՝ Ս. Բէհբուդեան, Երեւան, 2000, էջ 50:*

[12] *Տե՛ս* «Особые журналы Совета министров Российской империи 1908 года», под ред. Б. Д. Гальперина, Москва, 2011, *էջ 315. նաեւ՝* ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ, *Հայ հոգեւորականության մասնակցությունը* XX *դարի պատերազմներին եւ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երեւան, 1999, էջ 9:*

սեպտեմբերի 1-ից սկսվեց եկեղեցական գույքի բռնագրավումը։ Եկեղեցու եւ վանքերի ունեցվածքի ընդունումն ուղեկցվում էր բռնություններով։

1903 թ. հոկտեմբերի կեսերին ռուսական կառավարության եւ հայ հասարակության միջեւ առճակատումը հասավ իր գագաթնակետին։ Հայ հեղափոխական դաշնակցություն եւ Հնչակյան կուսակցությունների հանձնախմբերն իրենց գործունեությունը տեղափոխեցին Ռուսական կայսրության սահման եւ պատերազմ հայտարարեցին բռնատիրությանը[13]։ Կառավարության կողմից Հայ Եկեղեցու ունեցվածքի հափշտակումը նրանք համարեցին ոչ միայն Եկեղեցու նկատմամբ ոտնձգություն, այլեւ թշնամական վերաբերմունք հայ ժողովրդի հանդեպ։ Տեղի ունեցավ հեղափոխական եւ ինքնապաշտպանական խմբերի միաձուլում։ Ստեղծված իրավիճակի համար հայ հասարակությունը մեղավոր էր համարում հայատյաց Գ. Գոլիցինին, որը նախաձեռնել էր ծխական դպրոցների փակումը, եկեղեցական գույքի բռնագրավումը։

Կովկասի կառավարչապետի դիրքորոշումը հակապետական էր համարում նաեւ Մկրտիչ Ա. Վանեցին։ Կաթողիկոսը Հայոց Եկեղեցու ունեցվածքի հանձնումը կառավարության տնօրինությանը բնութագրեց որպես «անվստահություն հայ հոգեւորականության նկատմամբ»[14]։

Հունիսի 12-ին ընդունված օրենքը հիմնականում իրագործվեց 1903 թ. դեկտեմբերի վերջին։ 1904 թ. սկզբին ավարտվեց Հայոց Եկեղեցու ունեցվածքի բռնազավթումը, սակայն դրանով չավարտվեց հայ ժողովրդի պայքարը կայսերական կամայականությունների դեմ։

Հեղափոխական շարժման ծավալումից անհանգստացած՝ Գ. Գոլիցինը 1904 թ. մայիսի 13-ին դիմում է ներքին գործերի նախարարին եւ ներկայացնում կաթողիկոսի գլխավորությամբ «հակակառավարական» շարժումները. «Երեւանի նահանգում հակակառավարական շարժումները խոր արմատներ են գցել հայ հասարակության շրջանում։ Այդ շարժումների իրական ղեկավարն ու ոգեշնչողը կաթողիկոսն է»։ Գ. Գոլիցինը տեղեկացնում է նաեւ, որ Կովկասի հայ հեղափոխական հանձնախմբի Վաղարշապատի բաժինը փաստացի ձուլվել է կաթողիկոսի անօրինական գործող գրասենյակի հետ, որի միջոցով էլ պահպանվում է կապը հայրապետի ու հեղափոխականների միջեւ[15]։ Հեղափոխական շարժման

---

[13] Տե՛ս РГИА, ф. 1276, оп. 19, д. 2, л. 64։

[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 785, թ. 7։

[15] Տե՛ս անդ, գ. 437, թ. 10։

կենտրոն էր ներկայացվում Ս. Էջմիածինը, որը միավորել էր հոգեւոր եւ աշխարհիկ հեղափոխականներին՝ ինքնակալության եկեղեցական քաղաքականության դեմ պայքարում։ Գ. Գոլիցինը, ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, Վ. Պլեւեին առաջարկում էր հետադիմական միջոցների կիրառմամբ կանգնեցնել հեղափոխական շարժումը։ Նա պնդում էր, որ Ս. Էջմիածնից հեղափոխական տարրերի հեռացումը պետք է դառնար կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը[16]։ Գ. Գոլիցինի՝ Ս. Էջմիածնում հեղափոխական հանձնախմբի գործունեության մասին տեղեկություններն անհանգստություն առաջացրին կառավարության շրջանում։ Դրան հետեւեց կաթողիկոսի յուրաքանչյուր քայլին հետեւելու Վ. Պլեւեի կարգադրությունը։

Կայսրությունում ծայր առած լարվածությունը թուլացնելու համար իշխանությունն սկսեց նոր մոտեցումներ փնտրել։ Գ. Գոլիցինը, որն արդեն չէր համապատասխանում նոր ժամանակների ոգուն, 1905 թ. հունվարի 1-ին հեռացվեց պաշտոնից։ Ռուսական իշխանությունները, կայսրությունը հեղափոխական ցնցումներից փրկելու համար, ստիպված էին գնալ նոր զիջումների։ 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ Բ.-ն ստորագրեց հրամանագիր[17], որով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող ողջ անշարժ գույքն ու դրամագլուխը վերադարձվեցին օրինական տերերին։ Միեւնույն ժամանակ թույլատրվեց կրկին բացել հայկական ազգային դպրոցները, որոնք փակվել էին դեռեւս ԺԹ. դարի վերջին տասնամյակներում։

Այսպիսով՝ «Խրիմյան Հայրիկի հայրապետությունը» երկհատորյա աշխատության մեջ Վ. Թունյանը հիմնավորում է, որ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ ինքնակալության հետադիմական քաղաքականության ցայտուն դրսեւորումն էր, որը, սակայն, ցանկալի արդյունք չտվեց։ Հայապահպանության գիտակցումը համախմբեց հայ հոգեւորականությանը, քաղաքական կուսակցություններին եւ ժողովրդին։ Սկսվեց ազգային-ազատագրական պայքար։ Համաժողովրդական պայքարի ճնշման ներքո եւ կայսրությունում բռնկված հեղափոխության պայմաններում կառավարությունն ստիպված էր նահանջել։

---

[16] *Տե՛ս անդ, թ. 11։*

[17] *Տե՛ս* В. Г. Тунян, *նշ. աշխ., էջ 693–694. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 111, թ. 22, 22 շրջ. «Բարձրագույն հրաման հայոց եկեղեցական կալուածների եւ դպրոցների մասին», «Արարատ», 1905, է., էջ 585–587.* «Законодательные акты переходного времени. 1904–1908 гг.», под. ред. Н. И. Лазаревского, СПБ, 1909, *էջ 97–98։*

РЕЗЮМЕ

Политика правительства России, направленная на ограничение прав и деятельности Армянской Церкви, была тщательно изучена В. Туняном в своем двухтомном труде «Патриархат Хримяна Айрика». Источником и основой для исследования автора послужили документы из фондов Национального архива Армении, Государственного исторического архива России, периодической печати и сборников документов. Автор подробно представил процесс конфискации имущества Армянской Апостольской Церкви, антинациональный характер которого наиболее ярко проявился в событиях, предшествовавших принятию закона, и в регулярных обсуждениях. Окончательный результат этого процесса стало издание Закона о конфискации имущества Армянской Апостольской Церкви от 12 июня 1903 года, единственной целью которого было лишение Церкви ее автономии и финансовой независимости.

SUMMARY

The policy of the Russian government aimed at restricting the rights and activities of the Armenian Church was thoroughly studied by V. Tunyan in his two-volume work entitled “Patriarchy of Khrimyan Hayrik”. The sources of the author’s research were documents of the National Archives of Armenia, the State Historical Archives of Russia, periodicals and collections of documents.

In his work, the author presented in detail the process of confiscation of the property of the Armenian Apostolic Church, the anti-national character of which was most clearly manifested in the events preceding the adoption of the law, and in regular discussions in the governing regions. The final result of this process was the publication on June 12, 1903 of the Law on Confiscation of the Property of the Armenian Apostolic Church, the sole purpose of which was to deprive the Church of its autonomy and financial independence.